ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2024 թվականի N 79-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Ընկերությունների կողմից բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության 2024 թվականի մայիսի 21-ի N 5/01.8/5841 գրությունը ինչպես նաև Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով հաշվարկված 2025թ. համար բնապահպանական հարկից մասհանված 10 079 010 ՀՀ դրամ ներդնել Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգու բարեկարգման, ճեմուղիների կառուցման և կահավորման համար /կադաստրային ծածկագիր 04-003-0052-0003/, որտեղ նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

1.1 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգու քանդման, մաքրման և բարեկարգման աշխատանքներ / 40000 քառ.մ /,

1.2 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգու ոռոգման ցանցի կառուցում / 482 գծմ /,

1.3 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգին ապահովել լուսավորություն էլեկտրասյուներով և արևային մարտկոցներով / 13 հատ /,

1.4 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգում կառուցել չորսվակներով /բրուսչատկայով/ ճեմուղիներ / 417 քառ.մ /,

1.5 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգու համար տեղադրել այգուն համահունչ մետաղյա նստարաններ / 7 հատ /,

1.6 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգու համար ձեռքբերել և տեղադրել մետաղական աղբարկղեր / 7 հատ /,

1.7 Մեծամոր քաղաքի 1-ին թաղամաս 42 հասցեում գտնվող այգում առկա բաց տարածքների ծառատնկում և կատաչապատում / 30 հատ, 4200 թուփ և ծաղիկ /,

1.8 Կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերը,

2. Հաստատել 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջարկությունները և ֆինանսավորման համամասնությունները

3. Առաջարկել շրջակա միջավայրի նախարարությանը՝ հիմք ընդունել սույն ծրագիրը

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**